



ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի 250-ամյակին նվիրված հորեյաբնական նիստի նախագահությունը: Լուսանկար՝ Ռ. ՀԱԿՈՐՅԱՆԻ (ԱՐՄԵՆՊՐԵՍ)

# ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԾ ՏՈՆԸ

ՀԱՆԳԻՍԱՎՈՐ ՆՈՍ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻՆ 250-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՍՍՀՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ 250-ԱՄՅԱԿԻՆ

Օրերս նրանում կայացավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովի հորեյաբնական նիստը՝ նվիրված ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի 250-ամյակին: Ակադեմիայի նիստերի ղաֆիճում հավաքվել էին հանրապետության առաջատար գիտնականներ, հետազոտական հիմնարկությունների ղեկավարներ, բարձրագույն ուսումնական հաստատությունների, տեխնիկական ու ստեղծագործական մտավորականության ներկայացուցիչներ:

Նախագահությունում էին Հայաստանի կոմկուսի ու կառավարության ղեկավարները, Հայաստանի գիտությունների ակադեմիայի ղեկավարները, հանդիսությունների առթիվ ժամանած ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի պատվիրակության անդամները:

«ՍՍՀՄ գիտությունների ակադեմիան սովետական գիտության առաջատար կենտրոնն է» ղեկուցումով հանդես եկավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, սոցիալիստական աշխատանքի հերոս, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը:

— Թանկագին ընկերներ, — ասաց նա, — այսօր սովետական ամբողջ հասարակայնությունը, համալս աշխարհի գիտնականները տանում են սովետական գիտության առաջատար կենտրոնի՝ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հիմնադրման 250-ամյակը: «Ակադե-

միան մեր հարստությունն է» նշանաբանով սովետական բոլոր հանրապետությունները նշում են այդ փառապանծ հիմնարկության վաստակը համաշխարհային գիտական մտքի զարգացման գործում, հայրենիքին մատուցած նրա ծառայությունները, որի տնտեսական ու մշակութային զարգացման ասպարեզում նա վիթխարի դեր է խաղացել:

Պետերբուրգի գիտությունների ակադեմիայի ստեղծումը Պետրոս Առաջինը մտահղացել էր որպես պետական կարևոր միջոցառում, որը նպատակ ուներ զարգացնել գիտությունն ու կրթությունը Ռուսաստանում: 1724 թվականի հունվարի 24-ին հրապարակված հրամանագրով ակադեմիան պետք է զգարվ տար և արարեր գիտությունները:

Ակադեմիայի աշխատանքին մասնակցելու համար հենց սկզբից, որպես օպորտուններ հրավիրվեցին ինչպես տեղացի, այնպես էլ օտարներից: Ակադեմիայում սկսեցին աշխատել այնպիսի կարիառուն գիտնականներ, ինչպիսիք էին մաթեմատիկոս, մեխանիկ ու աստղագետ Լեոնարդ էյլերը, մաթեմատիկոս Գրեգորի Բեռնուլի, աստղագետ Փոզեֆ Բեռնուլի, սաղմնաբան Կասպար Վոլֆը, բնախույզ Պյոտր Պալասը:

Ակադեմիայի հիմնադրումից 17 տարի անց այնտեղ սկսում է աշխատել մեծն

Լոմոնոսովը և նրանից հետո՝ ուսուցիչ գիտնականների մի ամբողջ աստղաբույլ՝ բնախույզ Կրաչինսկովը, աստղագետներ Պոպովը, Ռոմոնովսկին, Ինսիդդեյեր, մեխանիկ Կոստրինկովը և ուրիշներ:

Գիտական մտքի այնպիսի հսկաների գործունեության շնորհիվ, ինչպիսիք են Լեոնարդ էյլերը և Միխայիլ Վասիլևի Լոմոնոսովը, Պետերբուրգի գիտությունների ակադեմիան համաշխարհային նախադեմ և ստանում է Լոնդոնի արքայական ընկերության հետ միասին գասվում է աշխարհի յաճաճույնի գիտական կենտրոնների շարքը:

Այնուհետև գեկուցողը անդրադառնում է այն մեծ ավանդին, որ ակադեմիան համաշխարհային գիտության մեջ ներդրել է 19-րդ դարում ու 20-րդ դարի ընթացքին, խոստով է Ռուսաստանի ղեկավարների ու արտադրողական ուժերի ուսումնասիրության ակադեմիայի մասնակցության մասին:

Նոխտեմբերյան մեծ հեղափոխությունը նոր դարազույս սկզբնավորեց Ռուսաստանի ակադեմիայի փառապանծ տարեգրության մեջ:

Կուսակցության ու կառավարության հսկայական հոգսաբարության ու օգնության շնորհիվ հաջորդ տասնամյակները հանդիսացան, ինչպես ամբողջությամբ վերցրած հայրենական գիտության (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

# ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԾ ՏՈՆԸ

(Սկզբը՝ 1-ին էջում)

տության, այնպես էլ նրա գլխավոր շտաբի՝ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի անընդհատ աճի ու ծաղկման ժամանակաշրջանը։ Երկրի գիտական մտքի զարգացման այդ հիմնական կենտրոնը զարձավ կուսակցության հավատարիմ հեներանը՝ մեր հայրենիքի սոցիալիստական վերափոխման գործում։

Այնուհետև կեկուցողը հանգամանորեն կանդ առավ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի գիտական ու գիտակազմակերպական բեղմնավոր և բազմազան գործունեության վրա, խոսեց երկրում գիտության նոր բնագավառների և ուղ-

ղությունների առաջացման ու զարգացման մասին, հետազոտական խոշոր կենտրոնների ստեղծման մասին։ Առանձնապես ընդգծվեց այն հսկայական օգնությունը, որ ակադեմիան միութենական հանրապետություններին, մասնավորապես՝ Հայաստանին ցույց է տվել գիտության զարգացման գործում՝ գիտությունների սեփական ակադեմիաներ ստեղծելու գործում։

Զեկուցման համար խոսքը տրվում է ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի պատվիրակության ղեկավար, ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի նախագահության անդամ, Լենինյան և Նոբելյան մրցանակների

դափնեկիր, ակադեմիկոս Ա. Մ. Պրոխորովին։

— Մեր ակադեմիայի հոբելյանի նախադասարասությունը, — ասում է նա, — դարձավ սովետական գիտության նվաճումների յուրատեսակ ստուգատես, և այդ ստուգատեսը ցույց է տալիս, որ գիտնականները համազումարի որոշումներին պատասխանում են առաջատար գիտական ուղղությունների զարգացման, նյութական արտադրության ոլորտում գիտության նվաճումների արմատավորման նոր հաջողություններով, արժանի ավանդ ներդրում կոմունիզմի համար մղվող համաժողովրդական պայքարի մեջ։

Գիտությունների ակադեմիան մեծ դեր է խաղացել մեր հայրենիքի բնական հարստությունների հետազոտման և յուրացման գործում, արժանի ավանդ ներդրել արդյունաբերության, գյուղատնտեսության, առողջապահության, կրթության, մշակույթի զարգացման մեջ։

Գտնվելով համաշխարհային գիտության առաջավոր բնագծերում, ակադեմիայի գիտնականները հիմնարար հետազոտություններ են իրականացնում ժամանակակից գիտության բոլոր կարևորագույն ուղղություններում, ամեն կերպ նպաստում տեխնիկական առաջընթացի արագացմանը՝ Միշարք հիմնական գիտական

ուղղություններում սովետական գիտությունը առաջատար դիրք է զբաղում աշխարհում, որը թույլ է տալիս լուծել երկրի էկոնոմիկայի զարգացման և պաշտպանունակության կարևոր խնդիրները։

Զեկուցման մեջ զգալի տեղ նվիրվեց Հայաստանի գիտնականների նվաճումներին։

\*\*\*

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը բնակարան կազմակերպական հարցը։ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի փոխպրեզիդենտ ընտրված Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Սերգեյ Ալեքսանդրի Համբարձումյանը։

(Արմենպրես)